

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԸ

31.05.2016 15:13



Մայիսի 31-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վարչական շենքի բակում տեղի է ունեցել Մխիթար Գոշի հուշարձանի բացման արարողությունը:

Վաղ միջնադարի Վարդապետի դիմաքանդակի հեղինակն է հայտնի քանդակագործ, քանդակային կոմպոզիցիաների վարպետ Ղուկաս Չուբարյանը (Չուբարը) (16.06.1923 - 23.03.2009):

Հուշարձանը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին նվիրաբերել է ՀՀ վաստակավոր բժիշկներ, բարերարներ Կառլեն և Սառա Եսայանների ընտանիքը:

Միջոցառումը սկսվել է Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոռյանի աղոթքով:

Բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը: Շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ նա մասնավորապես նշել է, որ Մեծ Վարդապետի թողած ավանդն անգնահատելի է Հայաստանի հոգևոր և աշխարհիկ կյանքում: Գոշն աչքի է ընկել միջնադարյան աշխարհին դեռևս անհայտ բարոյականության նոր և ժամանակակից լուծումներ առաջարկելու խիզախությամբ և մինչ օրս կիրառելի պատգամներով: Անդրադառնալով Գոշի փլիխոփայությանը և աշխատություններին՝ Արա Զոհրաբյանն ընդգծել է, որ 12-րդ դարում, երբ եվրոպան հաջակրաց արշավանքներ էր ձեռնարկում, Հայաստանի հեռավոր վանքերից մեկում Մխիթար Գոշն առաջարկում էր ՕՐԻՆԱՊԱՀ ՔԱՂԱՔԱՏՈՒ հետաքրքիր մոդել, ինչը իրավական մտքի գյուղ էր:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը: Ա. Հովհաննիսյանի խոսքով՝ իրեն միշտ հիացրել է Վարդապետի՝ ժամանակի հարաբերություններն առաջադեմ կերպով համապարփակ կարգավորելու տաղանդը, նրա գրչի ճկունությունն ու մտքի թռիչքը, այն, թե ինչ հանճարեղ կերպով է մեծանուն գիտնականը միավորել Աստվածաշնչյան կանոնները, հայոց կանոնական և սովորույթային իրավունքը: ՀՀ արդարադատության նախարարը նշել է, որ Պատմիչի վկայությամբ՝ Վարդապետը երկար տարիներ «Դատաստանագիրքը» անավարտ էր համարում, քանի որ, ըստ նրա՝ օրենսգրքերը երբեք կատարյալ և ավարտուն չեն կարող լինել: Ժամանակի, միջավայրի և իրադրության պահանջով միշտ ենթակա են փոփոխման, լրացման ու կատարելագործման: Ուստի, առաջադեմ մտածողը խնդրում է հետնորդներին, որպեսզի լրացնեն ու կատարելագործեն: Վարդապետը խորապես գիտակցում էր, որ իրավունքը և օրենսդրությունը տարբեր ժամանակներում, տարբեր երկրների և ժողովուրդների մոտ տարբեր է և առանձնահատուկ, ուստի, յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ընտրի իր կարգերին ու ժամանակին համապատասխանող նորմեր: Ելույթի վերջում Ա. Հովհաննիսյանը նշել է, որ մեր գործունեության ընթացքում, պետք է հետևենք Մ. Գոշի այն մտքին, որ արդարությունը պետք է լինի անաչառ, անկաշառ ու արդարացի և որ օրենքին ենթարկվելը պարտադիր է բոլորի համար: Ողջունելով ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությունը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը խորհրդանշական է համարել ՀՀ փաստաբանների պալատի բակում Գոշի դիմաքանդակի տեղադրումը, քանի որ Մխիթար Գոշն էր հենց իր Դատաստանագիրքում խոսել դատավարության, դատ ու դատաստանի, մարդու իրավունքների մասին: Նա նկատել է, որ դրանք ունեն այնպիսի արդիական նշանակություն, որ այսօր ընկալվում են՝ որպես եվրոպական քաղաքակիրթ արժեքներ: Մարդու իրավունքների պաշտպանը անգնահատելի է համարել փաստաբանների դերը Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարության կայացման գործում և, հետևաբար նաև՝ Մխիթար Գոշի ներկայացրած սիգնուրներն իրագործելու հարցում: Ելույթի վերջում Արման Թաթոյանն ասել է, որ այսպիսի միջոցառումները հնարավորություն են տալիս ևս մեկ անգամ քաղաքակիրթ աշխարհին ներկայացնելու հայ իրավական մտքի հարուստ պատմությունը և ապացուցելու, որ դրանք մեր իրավական համակարգի պատմական հիմքերն են կազմում:

Ելույթ են ունեցել նաև «Մխիթար Գոշի Ժառանգությունը. Պատմություն և արդիականություն» գիտագործնական ծեռնարկի հեղինակ Գառնիկ Սաֆարյանը, գրող հրապարակախոս, հասարակական գործիչ Ջորի Բալայանը: Փաստաբան Ալինա Ենգոյանի կատարմամբ հնչել է Կոմիտասի «Տեր ողորմեա» ստեղծագործությունը: Փաստաբանների երեխաների ջանքերով բեմադրվել է Մեծ Վարդապետ Մխիթար Գոշի առակներից մեկը:













Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })